

## Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու N32 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Բարձրագույն կրթությունը
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը /հավաստագիր/:  
Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
  1. Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով
  2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը
  3. Հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագիր/ պատճենը
  4. Հրապարակված հոդվածների ցանկը, կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ /դրանց առկայության դեպքում/
  5. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ/
  6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 03.10.2018թ- 02.11.2018թ ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգի»:

Մրցույթը տեղի կունենա 2018 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 14<sup>00</sup>-ին, Շիրակի մարզի «Գյումրու N 32 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ք.Գյումրի, Կոմիտերնի 1:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել «Գյումրու N 32 հիմնական դպրոց» ՊՈԱԿ (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Կոմիտերնի 1, հեռախոս 0312 53716):

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 32 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ\_Ի

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ